№ 95 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22 **1895** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22 № 95

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

WIEN

Յովհաննէս և Տիգրան Գէորգիէվանցները՝ յաւէտ սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը իր սիրելի եղբօր, և երկրորդը հօրեղբօր՝

ԳԱՐԵԳԻՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ ԳԷՈՐԳԻԷՎԱՆՑԻ

մահուան մասին, որ տեղի ունեցաւ ամսիս 19-ին, Նովոբոսիյսկ քաղաքում: Հանգուցեալի մարմինը այս օրվայ Բաթումի գնացքով կանցկացնեն դէպի իր ծնունդավայրը:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Новости» լրագրի առաջնորդողի առիթով. Անկարելի է հաւատալ. կամաւոր կոտորածի մանրամասնութիւնները. Մուշի քննիչ յանձնաժողովը. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Օրվայ հարցը.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ղզլարից. Նամակ Սաւրոպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

«НОВОСТИ» ԼՐԱԳՐԻ ՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂԻ ԱՌԻԹՈՎ

—

Օգոստոսի 12-ի համարում մայրաքաղաքի այդ լրագիրը աշխատում է ցոյց տալ, որ Բ. Դրան և Չինաստանի մէջ նմանութիւն կայ. „թէ Թիւրքերը և թէ Չինացիները, ասում է լրագիրը, բարբարոսներ և մոլեռանդներ են“:

Այդ կարծիքի հետ կարելի է զուցէ համաձայնվել, թէև իսկապէս Չինացիներին վիրաւորել կը նշանակէ՝ նրանց Թիւրքերի հետ համեմատելով: Չինացիները դարերից ի վեր բարձր քաղաքակրթութեան հասած մի ազգ են—այդ անհերքելի է—թէև նրանց քաղաքակրթութիւնը այլ տեսակի է, քան եւրոպականը և զուցէ մեզ անհամակրելի: Թիւրքերը, ընդհակառակն, չունեն և երբէք չեն ունեցել քաղաքակրթութեան և ոչ մի նշոյլ. նրանք բարբարոսներ են՝ բառի բուն նշանակութեամբ:

Դիցուք, համեմատութիւնը այս չափով ճիշդ է. բայց դրա անճշդութիւնը ակներև է դառնում յօդուածի ընթացքում:

Չինաստանը, ասում է լրագիրը, ինչպէս և Թիւրքիան, խոստումներ է արել եւրոպական պահանջներին զիջանելու և միսիոնարներին այլ ևս չը հալածելու,—բայց, այնու ամենայնիւ, հալածեց, կոտորեց: Թիւրքիան էլ մի անգամ խոստումներ արեց Հայաստանում բարենորոգումներ մտցնելու,—բայց չը կատարեց:

Եթէ միայն այն իրողութիւնը աչքի առաջ առնենք, որ տուած խոստումները չի-բաղրծվեցան և այդ իրրև հիմնակէտ համարենք համեմատութիւնների համար, այն ժամանակ ամենայն իրաւունքով Թիւրքիայի հետ կարող ենք համեմատել և մի մարդ, որ փող է պարտք վերցրել և խոստացած ժամանակին չէ վերադարձրել, կամ սրա նման մի այլ դէպք:

Բայց խոստումների առարկաները տարբեր են և ուրեմն անհամեմատելի: Չինաստանը, որքան էլ զիջումներ արեց եւրոպացիներին, միշտ անում էր այդ ստիպմամբ, ճնշման տակ, ենթարկվելով գերազանց ոյժին, բայց միշտ իր ներքին զգացմունքի հակառակ: Նա, երբ կարող էր, օգուտ էր քաղում պատեհ հանգամանքներից, որ իր իրաւունքները դարձեալ յետ առնի: Նա զզվում է եւրոպական կուլտուրայից, նա չէ ուզում տանել եւրոպական ազդեցութիւնը, նա ուզում է իր երկրում մնալ անփոփոխ պայմանների մէջ: Նա չէ ճնշում իր հպատակներին, նրանց չէ ենթարկում տարբեր օրէնսդրութիւնների. նա աքսորում է միայն օտար տարրերը, որոնք ուզում են նրան բարոյապէս ճնշել, օտար ազդեցութեան ենթարկել: Նա չէ ուզում նուաճվել, այլ ուզում է տէր մնալ իր երկրում:

Այլ են պայմանները Թիւրքիայում: Թիւրքիան իր սեփական երկրում ճնշում է այն տարրերը, որոնք երկրի բնիկներն են և ոչ դաղթականներ. նա ճնշում է նուաճվածներին, ոչ միայն սահմանափակելով նրանց իրաւունքները, այլ խլելով նոյն իսկ այն, ինչ որ ամեն մարդու տարրական իրաւունքն է համարվում՝ կեանքի, գոյքի, աշխատանքի, վաստակի, վերջապէս օրէնքի առաջ հաւասար լինելու իրաւունք:

Մի ծովային ցոյց Չինաստանի վերաբերմամբ նպատակ ունի սանձահարել ժողովրդի կրքերը օտար դաղթականների դէմ, ապահովել անհատների կեանքը. այն ինչ մի ցոյց Թիւրքիայի դէմ աչքի առաջ ունի՝ պաշտպանել մի ամբողջ ժողովուրդ կամայականութեան, ապօրինութեան դէմ: Առաջին դէպքում Եւրոպայի դերն է՝ զսպել չարագործներին, երկրորդումը—վերջ տալ եղեռնագործական մի ամբողջ սիստէմին: Առաջին դէպքում Եւրոպան յանձն է առնում պօլիցիական դեր, երկրորդ դէպքում մարդասիրութիւնից թելադրված պարտաւորութիւն է կատարում:

Բայց մի նմանութիւն կայ երկու դէպքի մէջ. թէ՛ Չինաստանում, թէ՛ Թիւրքիայում կատարված բարբարոսութիւնների համար, որքան էլ տարբերվէին նրանք միմեանցից, մեղքը Եւրոպայի վրա է ընկնում: Չինաստանը վստահութիւն է ստացել, երես է առել, տեսնելով որ Եւրոպան նրան ազատեց կատարեալ կորստից, որ սպառնում էր նրան Եապոնիան, և իր „շնորհակալութիւնը“ այն ձևով արտայայտեց, որ սկսեց կոտորել եւրոպական միսիոնարներին: Իսկ Թիւրքիան իր վրէժը հայերից է հանում, որովհետև Եւրոպան 17 տարվայ ընթացքում չը վստահացաւ դրանց վերաբերութեամբ ստանձնած պարտաւորութիւններն իրագործելու:

Անդրէաս Արծրունի

ԱՆԿԱՐԵԼԻ Է ՀԱՒԱՏԱԼ

—

Անգլիական լօրդերի ժողովում, մարկիզ Սալսբիւրին համարձակ և վստահ կերպով արտասանեց հետևեալ խօսքերը. „Մենք հաւատում ենք, որ ներկայումս չը կայ որ և է վտանգ, թէ սարսափելի անկարգութիւնները և յանցանքները կարող են կրկնվել Հայաստանում:“

Լօրդ Սալսբիւրիի խօսքերը, որ նա արտասանեց օգոստոսի 3/15-ին, տպագրվեցին „Մշակի“ նախավերջին համարում: Նոյն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, օգոստոսի 12-ին

Հատ մըն ալ:

Ան ալ զընաց, Համբարձումի Էֆէնտի Ուղուրլուեանն ալ, պաչտօնական էֆէնտի մը:

Օգոստոս 9-ին, չորեքշաբթի իրիկուն, արեւը մանելէն ժամ մը ետքը, Կէտիկ-Փաշա, հոն ուր Թիւթիւնճիէֆ սպանուեցաւ, տերորիսթ մը կը բռնէ Համբարձումը այն բօսլէին, երբ մօրը հետ տուն կը դառնար եղբօրը ընակարանէն, ճաշելու համար: Տերորիսթը դաշոյնը կը մխէ Համբարձումին կողը ու կը հեռանայ. միայն սպանութեան տեղը կը ձգէ Հնչակեան վճռագիրը, որով Համբարձումի մահուան դատապարտուած էր: Վիրաւորեալը հազիւ թէ կրնայ մրթմրթալ «ճանչցայ զարնողը» և շունչը կը փչէ:

Համբարձումի Ուղուրլուեանի անունը չեմ կարծեր, որ մինչև ձեզի հասած ըլլայ. հոս ալ քիչ ծանօթ էր, բայց Եօզղատի, Ամասիոյ, Մարզուանի կողմերը օհ շատ աղէկ կը ճանչնային թշուառականը. և հիմա սրտերը պիտի պաղչակին: Այդ Համբարձումն էր, որ 93-ին Եօզղատի մէջ մասնութիւններ ըրաւ, շատ գործեր խանգարեց, շատ արիւն թափել տուաւ: Ու յետոյ Պօլիս եկաւ, սուլթանը վարձատրեց զինքը, պաչտօն տալով գրաքննութեան դիւանին մէջ ամիսը 1,500 ղուրուշ (135 ռուբլի) ռոճիկով: Երիտասարդ էր, մօտերս պիտի ամուսնանար. եղբայրը հոս է, ան ալ մասնիչ մը. մայրը հոս է, ան ալ լրտես մը տուներու մէջ:

Համբարձումին վատութեանը վրայ որոշ դաղափար մը կրնայ տալ Պօլիս պատահած հետեւեալ դէպքը: Այդ մասնիչը, երբ դեռ մայրը բերել չէր տուած, կը բնակէր հայաստանցիի մը սենեակը. ծանօթացած էր պարզամիտ բարեկամներու միջոցաւ. խաբած էր զինքը հիւրընկալողները և անոնց սեղանէն կուտէր ձրիաբար: Կը դիտէր թէ երկու երիտասարդ շատ բացակայ կը գտնուին տունէն. հարց ու փորձ կընէ և կիմանայ վերջապէս, որ յեղափոխական թերթեր կարդալու կերթան. կը խնդրէ իրեն ալ բերել այդ թերթէն. փափագը կը կատարուի: Եւ ահա երկու օր ետքը երիտասարդները կը ձերբակալուին. տուներնին խուզարկութիւն կըլլար, Համբարձումին համար բերած յեղափոխական թերթը կը բռնուի. խեղճերը դեռ չէին գիտեր զիրենք մատնողին անունը, երբ ոստիկանութեան նախարարը դէմադէմ կը բերէ զիրենք: Երկու երիտասարդները դատապարտուեցան անցած տարի տասնական տարուան բերդարգելութեան:

Անցած ամսուան ընդհանուր (!) մոռացութեան մէջ անոնք ալ ազատուեցան: Իսկ Համբարձումի դատ իր պատիժը:—Հիմա կարդը որուն է:

—

Երկու երեք օր է, որ մեր քաղաքական խնդիրները ծանր կերպարանք մը կառնեն: Թէ Դրան և թէ Ելտզի պալատի մէջ տիրող արտակարգ իրարանցումը նշանակ մըն է, թէ բաներ մը կը դառնան: Լուրերը կը հաղորդեմ մասամբ վերապահութեամբ և մասամբ ալ իբրև կատարեալ ճիշդ:

Երէկ լուր հասաւ, թէ անգլիական երեք զրահաւոր, բաժնուելով Պոսուրումի առջև կեցող նաւատորմէն, յառաջացած են դէպի Այվալըգ, որ Տարտանելէն վեց ժամ հեռու է: Այս լուրին պատճառած յուզումը կրնաք գուշակել: Սակայն որոշ չի գիտցուիր, թէ այդ յառաջացումը իբր պարզ պտոյտ մըն է, թէ նպատակաւոր: Այսօր կը սպասուի Լօնտօնէն ստոյգ լուրը. անհամբերութիւնը մեծ է:

Իբր թէ բաւական չըլլար նաւային ծանր լուրը, ահա կը խօսուի թէ Անգլիոյ դեսպան սըր Ֆիլիպ Քըրրի արձակուրդով կը մեկնի Պոլսէն: Վաղը, որ է կիրակի, մեծ հացկերոյթ պիտի տայ Թարասպիա իր ընակարանը, մնաք բարովի հացկերոյթ: Արդի ծանր պարագաներուն մէջ սըր Ֆիլիպ Քըրրիի հեռանալը ցոյցի մը երևոյթը կառնէ: Զանազան շրջանակներուն մէջ տարածուած լուրերուն նայելով, զուգադիպութիւն մը պէտք է փնտռել անգլիական մարտանաւերուն Այվալըգ հասնելուն և դեսպանին մեկնումին միջև: Սպասենք երկու օր, և ճիշդը կամ սխալը երևան կուգայ:

—

Խնդիրը անչուշտ մեծ կարևորութիւն մը ունի, որ Դուռը, Ելտզի պալատը իրարանցումի մէջ են և Շաքիր փաշան շուտ Հայաստան դրկելու կաչխատին: Առջի նամակով քիչ մը տեղեկութիւն տուած էի. հիմա գործը հետևեալ վիճակը ունի: Շաքիր-փաշային պիտի ընկերանայ Տանիշպէյ, իբր օգնական, կցորդ (attaché) պիտի ունենան հայ մը, որուն անունը չըսուիր դեռ, և գունդ մը քարտուղարներու և թարգմաններու: Մեծաչուք հանդիսաւորութեամբ այս քննիչ յանձնաժողովը Հայաստան դրկելով, կը կարծեն թէ պիտի կրնան աչքերը շլացնել, և բարեկարգութեանց գործադրութիւնը իբր լրացեալ իրողութիւն մը ներկայացնելով՝ ջուրը ձգել Ծրագրին խնդիրը:

Ո՞վ է այդ Տանիշ-պէյը. երկու հատ կան. մէկը Թիւրք է, Դուռը հիւպատոսութեան սենեակին տնօրէնն է: Միւսը՝ քրիստոնեայ՝ սիւրիացի արաբ մը, որ հանրային պարտքի վարչութեան մէջ պաչտօն ունի: Հաւանական է, որ այս վերջինը նշանակուած ըլլայ. իբր թէ քօմիսերը իսլամ ըլլալով՝ օգնականն ալ քրիստոնեայ կըլլայ. լմնցաւ գնաց:

Թող անունք երթալու պատրաստուին, և Հայաստանէն եկած լուրերն ալ միօրինակ կրկնութիւններն են այն բարբարոսութեանց, զոր հանդարտ հանդարտ կը գործադրէ Թիւրք իշխանութիւնը, կամ ըստ Սալսպիւրիի՝ Թիւրք անիշխանութիւնը:

Ցուլիս 21 թուականով Պոլիս հասած մէկ նամակը, որ ամենաճիշդ տեղեկութիւններ կը պարունակէ, կը պատմէ, թէ տեղական իշխանութիւնները գացեր բռնի կերպով ստիպեր են Պաղրանցի և Պատրկանցի քիւրդ ցեղերը, որ այս ամառ Սասունի լեռները գան: Ուրիշ տարիներ այդ ցեղերը իրենք կուզէին գալ և կառավարութիւնը դժուարութիւններ կը յարուցանէր: Այս տարի հակառակը եղած է: Անցած տարուան ոճրագործութիւնները ընողները այս ցեղէն էին. իրենք թալլած էին հայոց ստացուածքները, գերի տարած աղջիկները ու կիները. կը վախնային, որ վերադառնալով այդ լեռները փորձանքի կը հանդիպին: Կառավարութիւնը մարդ ղրկեց Կինճի կառավարիչին միջոցաւ, բայց քիւրդերը կասկածեցան, թէ կառավարութիւնը զիրենք կը հրաւիրէ, որպէս զի ձեռքերնուն առնէ կողոպուտներնին. տեղերնուն չարժել չուզեցին: Ան ատեն կառավարութիւնը դիմում ըրաւ Զիլանի համբաւաւոր Շեյխ Մէհմէտին և անոր կրօնական ազդեցութեամբը համոզեց քիւրդ ցեղերը, որ գան լեցուին Սասունի լեռները:

Ի՞նչ է կառավարութեան նպատակը. մէկ կողմէ ահաբեկ ընել հայերը, ցոյց տալով թէ ինք ո և է կարևորութիւն չընծայեր եւրոպական պետութեանց, միւս կողմէ այդ ցեղերուն Սասունի լեռներուն վրա սեփականային իրաւունք մը ունենալնին հաստատել:

Ո՞ր տեղուանքներն են:

Սասունի խնդրին վրայ խօսած ատենս չի մոռնամ անցողաբար յիշել, թէ երկու գլխաւոր ոճրագործներէն մէկը, Թահսին փաշա, Բաղէշի նախորդ կառավարիչը, Սուլթանէն ամսական 6,000 ղրուշ (640 ռուպլի) ամսականի արժանացաւ:

Ե՞րբ պատոյ բարձրագոյն շքանշանը, ինչպէս Զէքիին տրուեցաւ:

***

համարում ապագրվեց և Կամախի աւերումունքների լուրը, մի սոսկալի լուր, որ ցոյց է տալիս, թէ Թիւրքաց զօրքը սպառնում է Կամախից դարձնել մի երկրորդ Սասուն։

Ուրեմն օրին հաւատանք։ Մենք կուզենայինք հաւատալ անգլիական առաջին մինիստրի խօսքերին, որ իր պաշտօնի բարձրութիւնից հաղորդեց ամբողջ աշխարհին, թէ ինքը հաւատացած է, որ Թիւրքաց անկարգութիւնները և յանցանքները չեն կրկնվի Հայաստանում, և ահա հենց այն օրերին, երբ յարգելի մարկիզը յայտնեց իր այդ կարծիքը, նոյն այդ օրերին Հայաստանի կենտրոնից մէկում, Կամախի մէջ, Թիւրքաց զօրքը աւերեց բազմաթիւ գիւղեր, եկեղեցիներ, վանքեր, կոտորեց անմեղ մարդիկ, և դեռ սպառնում է շարունակել իր այդ արիւնարբու արշաւանքը դէպի ուրիշ կողմեր...

Կրկնում ենք, ուրեմն ինչպէս հաւատանք անգլիական առաջին մինիստրի գուշակութիւններին, ինչպէս հաւատանք, որ յիրաւի Թիւրքաց կառավարութիւնը կենթարկվի որ և է կառավարութեան յորդորին, խնդրանքին, սպառնալիքին, երբ նա մի կողմից հաւատացնելով, թէ Սասունի-կոտորածը վերջինն է, միւս կողմից առաջ է գալիս մի երկրորդ Սասուն։

Ոչ։ Դժուար է հաւատալ, նոյն իսկ անկարելի է հաւատալ։ Օսմանեան կառավարութիւնը իրան նպատակ է դրել ջնջել հայերին Հայաստանի մէջ, և նա անշեղ կերպով դիմում է դէպի այդ նպատակը, առանց յուսահատվելու, առանց վախենալու Եւրոպայի սպառնալիքներից։

Անկասկած, թէ լորդ Սալսբիւրին և թէ նրա հետ հաղարաւոր բարեմիտներ, համոզված էին, որ Սասունի դէպքից և այնքան աղմուկներից յետոյ Թիւրքիան զգոյշ կը լինի և կը զսպի իր ֆանատիկոսութիւնը։ Բայց ահա մի նոր կոտորած, մի նոր աւերմունք, մի երկրորդ Սասուն,—Կամախը,—որ վճռական կերպով հերքեց այդ միամիտ ենթադրութիւնը, այդ միամիտ հաւատը։

Մինթ Եւրոպային բաւական չէր մի Սասուն, և նա դեռ ուզում է տեսնել Հայաստանի մէջ մի քանի Սասուններ, որպէս զի վերջնականապէս հիասթափվի և համոզվի, որ յիրաւի, Թիւրքիայի խօսքին հաւատալը՝ դժբաղդութիւն է ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար։

ԿԱՄԱԽԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

(Ականատեսի հաղորդածից)

«Յուլիսի վերջերը, օսմանեան զինուորական պաշտօնեայ մը, բաւական դրամով, իր հետ ալ վեց զինուոր առած, կերթար Կամախ։ Այդ զինուորներէն երկուքը ուզեցան կողոպտել իրենց պետը։ Տակաւին գործի չը սկսած, երբ միւս զինուորներն ալ իրենց գողակից ընելու կը համոզէին, միւս չորսը, աւելի երկչոտ, գաղտնապէս այդ մասին կը յայտնեն պետին։

Նա ալ, փոխանակ խոհեմ միջոցաւ մը խոյս տալու վտանգէն, կը հրամայէ զարնել այդ խորհուրդը յղացողներին։ Իսկոյն կը սպանեն զինուորները, մարթինի զէնքերով։

Բնական էր, որ խնդիրը ուշադրութեան պիտի առնուէր 4-րդ բանակի կողմէն և թերևս ծանր պատասխանատուութիւն դար այդ պաշտօնեայի և զինուորներու վրա, ուստի այդ անգութ ճիւաղներ մի սարսափելի ստութիւն կընեն, յայտարարելով, թէ հայերը զինեալ յարձակեցան իրենց վրա. վիրաւորելով մեծին և սպանելով երկու զինուորներին՝ փողերը տարին։

Դէպքէն 5—6 օր յետոյ, 4-րդ բանակի հրամանատար և Սասունի կոտորածի անիծեալ հերոս Զէքի-փաշան, բազմաթիւ զօրքերով, ռազմամթերքներով, թնդանօթներով կը յարձակի ամբողջ մեր կողմի գիւղերու վրա։ Այժմ սարսափելի դրութեան մէջ կը գտնվինք։

Ես որ անտառի մը խորը՝ ծառի վրա, այս տողեր կը գրեմ՝ չը գիտեմ, թէ պիտի կրնամ ձեզ հասցնել, և դուք ալ բոլոր քրիստոնեայ տէրութեանց և քրիստոնեայ աշխարհի. չը գիտեմ, թէ վաղը ողջ պիտի մնամ և ինչ տեսակ մահ պատրաստած է ինձ...

Մեր բոլոր գիւղերը և վանքերը զօրքով և թնդանօթներով պաշարուած են. կիներուն կը բռնաբարեն, մարդկանց վրանին կաղ թափելով՝ կայրեն, վանքերնիս կը պղծուին և կը կողոպտուին։ Հայ մը տեսնել և չը զարնել՝ մեղք կը սեպեն զինուորները։

Ալ չեմ կրնար շարունակել, զի ձայներ կը լսեմ և պէտք է աւելի անտեսանելի տեղ պահուիմ...

Կամախ, օգոստոսի 8 Վ.—ցի

II

Երզնկայից, Իզմիրլեան պատրիարքի անունով ուղարկված է հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը, որի մի պատճէնը մեր ձեռքը անցած լինելով, ահա տպագրում ենք։

«Ամենապատիւ Ս. Պատրիարք.

Կ. Պոլիս.

Բարձրաշնորհ և Սրբազան Տէր.

Աւաղակաց խումբ մը, որոյ ինչ ազգէ ըլլալը անյայտ է, անցեալ երկուշաբթի օր, քաղաքէս վեց ժամ հեռաւորութեամբ, դէպի Կամախ՝ կողոպտած էր զինուորական անասնաբոյծ գայմագամ մը և գոլ-աղասի մը և սպաննած էր չաւուշ մը։

Տեղւոյս կառավարութիւնը և Միւշիրը, շրջանակ քիւրդերու վկայութեան վրա համոզում գոյացնելով, թէ այդ աւաղակներն հայ են, ձիաւոր, հետեակ, և թնդանօթաձիգ զօրքերով կը պաշարեն Կամախի բոլոր լեռներն։ Զօրաց այդ ստուար բազմութիւն, միացեալ շրջակայ թիւրք և քիւրդ բնակչաց հետ, մտնելով Գառնի, Թաւկներ, Թորդան, Աւագ-վանք, Սեպհոյ ս. Լուսաւորիչ և այլ հայաբնակ գիւղեր ու վանքերը՝ կողոպտեց նոցա նպարեղէններն, այծ, ոչխար, եզ, կով, և ամեն ինչ որ ուտելի է։

Հետզհետէ անլուր խժդժութեանց գոյժեր կը հասնին, Լուսաւորիչ և Աւագ-վանք իսպառ կողոպտուած են և վանականք անյայտացած։

Լուսաւորչի պահապանն ու հովիւը սաստիկ դանակոծուած. հրացանի փողը կուրծքերնուն դրած կը սպառնան սպաննել, եթէ չըսեն մի առ մի ամսէ մը հետէ վանքն այցելողներու անունները, զտիկին Մարթա պառկեցնելով կաղ կը բերեն և այրել կը սպառնան, խոստովանութիւն մը առնելու համար. ապա խարշած հաւկիթ կը կապեն նոցա անութներու տակ, չարչարելով խօսք քաշելու համար։

Այլուր գանակոծեալներու կապոյտներն անյայտացնելու համար սուրի ծայրով կը ճեղքուեն նոցա կապոյտներն։

Հոռոփով և Մարեղ գիւղերն անտանելի տանջանաց մատնուած են. այդ բազմաթիւ զինուորներ և պաշը-պղուքներ, Երիզայէ նպար չընդունելով, գիւղացւոց բոլոր ունեցածներն կը յափշտակեն։

Եղեկեի տանջեալներն մի առ մի ըսեր են անունքն այն անձանց, որք ամսէ մը ի վեր հոն յաճախած են ուստի համար. ուստի և երիզայի 12-ի չափ անձինք ձերբակալուելով բանտարկուեցան և ձերբակալութիւնը կը շարունակուի։

Մօտալուտ վտանգ մ'ալ կը նշմարուի քաղաքիս համար, վասն զի, հակառակ օրինաց և կամաց վեհ. սուլթանին, ամեն ապօրինաւորութիւնք ի գործ կը դրուին։

Անյապաղ օգնութիւն կը խնդրեմք առաջն առնելու վտանգի մը, որ չատ եղերական կրնայ ըլլալ։

Առաջնորդարան Երիզայ,
Խառն ժողով»

ՄՈՒՇԻ ՔՆՆԻՉ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

(Թղթակցութիւն «Daily News»-ի, Կ. Պոլսից)

—

Եւրոպական դեղեգատների զեկուցագիրը

«Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեղեգատների զեկուցագիրը Սասունի արկածների մասին՝ արդէն ուղարկված է Կ. Պոլիս, ուր կը ներկայացնի երեք պետութիւնների դեսպաններին Կ. Պոլսում գտնվող ֆրանսիական դեղեգատ Վիլբերը, նախ քան այս նամակը կը հասնի Լոնդոն։

«Ես չեմ տեսել զեկուցագիրը, բայց տեսակցել եմ թէ դեղեգատների և թէ ուրիշ անձերի հետ, որոնք ծանօթ են հետազօտութեան գործին և կարող եմ յայտնել մի քանի տեղեկութիւններ այն գօկումենտի մասին, որը բնականաբար դեռ գաղտնիք է պահվում։

«Թոյլ տուէք նախ և առաջ պարզաբանել այն դիրքը, որի մէջ գտնվում էին դեղեգատները հետազօտութեան ժամանակ։ Ես յաճախ լսել եմ, որ դեղեգատներին անուանում էին միջազգային յանձնաժողովի անդամներ կամ եւրոպական կօմիսարներ։ Դա մի մոլորութիւն է, որի ուղղելը չատ մեծ կարեւորութիւն ունի։ Թոյլ տուէք յայտնելու, որ յանձնաժողովը չէ եղել միջազգային, իսկ եւրոպական դեղեգատները չեն եղել նրա անդամները. նրանց նշանակել էին Կ. Պոլսի դեսպանները՝ հսկելու համար թիւրքաց հետազօտութեան գործի վրա։ Նրանց նոյնպէս իրաւունք էր տրված պահանջել, որ հակառակ ցուցումներ տուող վկաների թիւը չատացնեն և հրաւիրեն այս կամ այն վկային, որոնց ցուցումները նրանք ցանկանում էին լսել։

«Երբեմն յանձնաժողովի անդամները մերժում էին կատարել այս պահանջը։ Այդպիսի մի մերժումի պատճառով էր, որ դեղեգատները հրաժարվեցին շարունակելու իրանց մասնակցութիւնը։ Փակագծի մէջ նկատենք, որ այդ դէպքը մի բաղդաւոր հանդամանք էր։ Եթէ այդպիսի մի բան չը պատահէր, դուցէ քննիչ յանձնաժողովի հետազօտութիւնը անվերջ դառնար և տարիներ պահանջէր։

«Դեղեգատները կարող էին ստուգել արձանագրութիւնները, որովհետև իրանք ևս արձանագրում էին յանձնաժողովի նիստերի մանրամասնութիւնները և ունեն նրանց պատճէնը։ Նրանց միացեալ տեղեկագիրը, որ տուել են իրանց կառավարութիւններին, պէտք է անշուշտ լինի համաձայն այն տեղեկագրին, որ թիւրքաց յանձնաժողովը ներկայացրել է սուլթանին, հիմնվելով նոյն նիւթերի վրա։

«Թիւրքաց յանձնաժողովը աշխատում էր հաստատել, որ Սասունում գոյութիւն է ունեցել մի ապստամբական կազմակերպութիւն, որը ճնշելու համար հարկաւոր էր զինուորական միջամտութիւն։ Մինչդեռ ուրիշ տեսակ ապացոյցներ պարզ կերպով ցոյց են տալիս, որ թէև Դամատեանը անկասկած յարուցել է յեղափոխական զգացմունքներ և նրա գործունէութիւնը շարունակող Մուրադը խրախուսել և քաջալերել է հայերին՝ դիմել ինքնապաշտպանութեան քիւրդերի դէմ՝ նոյն իսկ կոտորածի միջոցին, սակայն այդ բոլորը դուրս չէ եկել սաղմնային սկզբնաւորութեան սահմաններից և չէ հասել այնպիսի մեծութեան, որ արդարացնէր թիւրքաց զօրքերի Սասուն ուղարկելը։ Նոյն իսկ Մուրադին կալանաւորելու համար ամենեին հարկաւորութիւն չը կար այնքան զինուոր վերցնել, որչափ վերցված էր։

«Պէտք է նկատել, որ եւրոպական դեղեգատները ամենեին ազատ գործողներ չէին այնտեղ. նրանք իրաւունք չունէին անկախ կերպով վկաներ կամ ապացոյցներ որոնել, այլ պէտք է եղածներից ընտրէին։ Նոյնպէս նրանք իրաւունք չունէին հրաժարվել հետազօտութիւնից կամ դադարեցնել թիւրքաց հետազօտութիւնը, ինչ անկատար ձև էլ նա ստացած լինէր։

«Այդ իսկ պատճառով գործավարութեան համար չէր մշակված ոչ պլան, ոչ ծրագիր։ Դեղեգատներից մէկը չատ աջող նկատեց, որ «հետազօտութիւնը ոչ սկիզբ ունեցաւ և ոչ վերջ»։ Իսկ նրա միջին մասում թիւրքերը զբաղված էին կողմնակի դատարկաբանութիւններով, որոնց նրանք աշխատում էին մեծ կարեւորութիւն տալ։

«Այդ է պատճառը, որ գործը ձգձգվում էր և վեց ամիս ժամանակ խլեց։ Նա կարող էր առանց ընդհարումների շարունակվել և անվերջ։ Թիւրքերին ձեռնտու չէր կոտորածների ապացոյցները մանրամասն արձանագրել։ Դեղեգատները կոտորածին վերաբերեալ գլխում մեծ ջանք են գործ դրել մտցնելու ապացոյցներ, փաստեր և թւեր՝ մարդկանց և անասունների կորստի մասին։

«Ամենամխիթարականը այն է, որ կոտորածին վերաբերեալ գլխում անհերքելի և բազմաթիւ վկայութիւններ և ապացոյցներ կան. Գելիեգուզանի ժողովրդին ամբողջ խմբերով կոտորելու, տէր-Յովհաննէսի չարչարանքի, կանանց, երեխաներին յօշոտելու պատմութիւնները, որոնց մասին ես գրել եմ «Daily News»-ին, հաստատված են ընդարձակ ապացոյցներով։

«Կարծում եմ, որ սպանվածների, կոտորվածների թիւը աւելի քիչ է, քան գրված է։ Սակայն դեղեգատներն էլ չեն կարողացել որոշել իսկական թիւը։ Աւերված է 22—25 գիւղ հիմնովին։ Մի գիւղից, որի բնակիչների անուանացուցակը կազմված է, մեռել են 100 հոգի։ Դեղեգատները պատմում են, որ Գելիեգուզանից դէպի Սեմալ տանող ճանապարհը պատկերացնում էր մի աւեր երկիր, ինչպէս լինում է հեղեղից յետոյ. գիւղերը հիմնովին աւերված էին։ Դեղեգատները գտել են Գելիեգուզանի եկեղեցու սեղանի քարը կոտրատած քիւրդերի ձեռքով։

«Կոտորածի սկզբին, ամբողջ տասներկու օր, հայերը յետ են մղում եղել օրից օր աւելացող քիւրդ հրոսակների յարձակումները։ Այդ իսկ միջոցին թիւրքաց կանոնաւոր զօրքի երկու վաշտ վրան են եղել զարկած Մրկեմուզան կոչված մարգագետնում, որ կուի դաշտից միայն մէկուկէս մղոն հեռաւորութիւն ունի։ Այդ վաշտերի հրամանատար Հաջի Մուստաֆա էֆէնդին, յանձնաժողովի հարցաքննութեան միջոցին ասաց, որ նա այդ ընդհարման մասին ոչ լսել է և ոչ տեսել է(?)։ Հաջի Մուստաֆային կարող է արդարացնել այն բանը, որ նա փոքր ինչ խուլ է, բայց զարմանալի է, որ նրան վիճակակից են եղել և բոլոր նրա զինուորները։

«Այնուհետև բազմաթիւ վկայութիւններով հաստատվում է, որ այդ երեք չաբաթվայ ընդհարումից յետոյ դարձեալ երեք չաբաթ շարունակվում էր հայերի կոտորածը. հայերին սպանում, յօշոտում էին, ուր որ նրանց պատահում կամ գտնում էին։»

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I

Դիպլոմատիական գործակալ

Անգլիական «Sheffield» լրագիրը հաղորդում է, որ լորդ Սալսբիւրին այս օրերս կամ ուղարկել է, կամ կուղարկի Կ. Պոլիս մի դիպլոմատական գործակալ՝ յատկապէս հայոց հարցը կարգադրելու համար։ Բոզդէրրիի նախկին մինիստրութեան հայկական բարենորոգումների պրոգրամից ոչ ոք գոհ չէ, այնպէս որ բոլոր կուսակցութիւնները Անգլիայում պատրաստ են ընդունել բարենորոգումների մի ուրիշ նախագիծ, միայն թէ նրա մէջ պահված լինի եւրոպական կօնտրոլի ըսկզբունքը։»

II

Նպաստներ

Անգլիայում շարունակվում է սասունցիների օգտին նպաստներ ժողովելու գործը։ «Daily News» լրագրի օգոստոսի 24-ի համարում տպագրված են վերջին նուիրատուութիւնները։ Բոլոր գումարների թիւը հասնում է 2,730 ֆունտ ստերլինգի, 5 շիլինգի և 1 պենսի։»

III

Գերմանիայի մասնակցութիւն

Պետերբուրգից, օգոստոսի 20-ին, «Новое Обозрѣніе» լրագիրը ստացել է հետեւեալ հեռագիրը.

«Բերլինից «Новости» լրագրին հեռագրում են. «Լուր է պատում, որ Գերմանիան միանում է այն երեք մեծ պետութիւններին, որոնք պահանջում են բարենորոգումներ մտցնել Հայաստանում։»

ՕՐՎԱՑ ՀԱՐՑԸ

XXVIII

Դիարբէքիրում և Աղանայում խօլերան կոտորած է անում։ Խօլերան երեսց և Էրզրումի մէջ,—ահա վերջին լուրը, որ հեռագիրը բերեց։

Թշուառ Հայաստանի ցաւերին խօլերա էր պակաս՝ ամեն ինչ կատարեալ անելու համար.—այդ էլ երեսց։

Այդպէս ուրեմն՝ կամ սով, կամ կոտորած, կամ խօլերա։ Դրանք են թիւրքաց Հայաստանի մշտական հիւրերը, որ երեւում են այդ դժբաղդ երկրի մէջ կամ միասին, կամ առանձին առանձին։

Սովը թիւրքաց Հայաստանի համար արդէն դարձել է մի քրոնիկական ցաւ, որ պարբերաբար համարեա ամեն տարի կրկնվում է, տանելով հազարաւոր զոհեր։ Կոտորածը նոյնպէս սպառնում է պարբերական բնաւորութիւն ստանալ, և դրա ապացոյցն այն, որ հազիւ մի տարի անցած Սասունի կոտորածից, տեղի ունեցաւ մի երկրորդ, նոյնպէս սոսկալի կոտորած՝ Կամախի կոտորածը։ Իսկ խօլերան՝ աղքատ, մաշված, սովատանջ ժողովրդի այդ մշտական հիւրը, նոյնպէս պարբերաբար, եթէ չասենք ամեն տարի, երևան է գալիս թիւրքաց Հայաստանի այս կամ այն կենտրոնում կամ դաւառում, հնձելով անպաշտպան, հացից և բժշկական օգնութիւնից զուրկ ժողովրդին, ինչպէս մանգաղը՝ բաց դաշտի մէջ...

Սով, կոտորած, խօլէրա,—ահա Թիւրքաց կառավարութեան քաղաքակրթութիւնը, նրա «հայրախնամ» հոգատարութեան մշտական պտուղն ու արդիւնքը:

Մեր եւրոպացի բարեկամները կարծում են, որ բաւական է կախել մի որ և է Զէքի, գնդակահար անել մի որ և է Մուսա-բէյ, կամ Թահսին-փաշա, և ահա Հայաստանի ժողովուրդը կապրի խաղաղ կեանքով, հանգիստ ու գոհ:

Բայց նրանք սխալվում են: Ուզում էք մի Զէքի-փաշայի, մի Թահսին-փաշայի տեղ կախեցէք տասն, քսան հատ. դրանց տեղ դուրս կը գան հարիւրաւորներ, հազարաւորներ: Կուզէք մի տարվայ սովի ժամանակ Հայաստանը լցրէք միլիոնաւոր պուդ ցորենով և անթիւ ոսկով ու արծաթով,—մի և նոյն է, դրանից ոչինչ չի դուրս գայ: Յաջորդ տարին դուրս կը գան նոր-նոր Զէքի, Թահսին փաշաներ, տեղի կունենայ աւելի մեծ կոտորած, կը սկսվի նոր, աւելի խիստ սով, երևան կը գայ ահռելի խօլէրա, որպէս զի լրացնի նախորդ տարվայ պակասը, որպէս զի հասցնի այդ երկրին վերջին անբուժելի հարուածը:

Ուրիշ կերպ լինել էլ չէ կարող: Թիւրքաց ամբողջ վարչական սիստէմը ուրիշ ոչինչ չէ արդիւնաբերում,—բայց միայն սով, կոտորած, խօլէրա:

Խ. Մալումեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Օգոստոսի 5-ին

Թէև մի երկու երեք ամիս առաջ այգեպէրերը երկիւղ էին կրում խաղողի «միլդիւ» կոչված հիւանդութիւնից, որ շատ այգիներում երևեցաւ, բայց և այնպէս այս աշունը, ինչպէս երևում է, ղզլարցիներին տալու է խաղողի բաւական առատ բերք: Սակայն ինչ օգուտ, եթէ անցեալ տարվայ նման չը պիտի կարողանանք մեր գինին փոքր ի շատէ լաւ գներով վաճառել: Այնու ամենայնիւ այս տարի մեծ է ղզլարցիների յոյսը, որովհետև ուրիշ շատ տեղերում խաղողի բերքը սպասածից շատ վատ է, հնարիւ տեղացող կարկուտների և խաղողի որթի հիւանդութիւնների:

Վլադիկավկազ-Պետրովսկ գծի Խասաւ-Իւրտ կայարանի և Շեկլօվօ սանիցայի մէջ վերջին ժամանակներս երևացել է 12 հոգուց բաղկացած մի աւազակային խումբ: Ճանապարհը երկիւղալի լինելով, աւելացրած է պահապանների թիւը:

Անցեալ ամսի 23-ին, յօգուտ քաղաքային այգու, այստեղի սիրողները ներկայացրին «Роковой шагъ» պիէսան: Ներկայացումը կարելի է աջող համարել: Գոյացած 100 ռուբլի արդիւնքը յատկացվեց վերոյիշեալ նպատակին:

Օգոստոսի 6-ին նոյն նպատակով մի խումբ երիտասարդներ տալու են «Մեր և նախապաշարմունք» դրաման: Գովելի է սիրողների եռանդը իրանց քաղաքի համար:

Մեր հին ատաման գրաֆ Կօցեբուին փոխարինեց Մարօզով:

Բ. Ա.

ՆԱՄԱԿ ՍՏԱՎՐՕՊՕԼԻՑ

Օգոստոսի 12-ին

Ամսիս 5-ին Ստավրօպօլ եկաւ Խորէն եպիսկոպոս Ստեփանէն: Նա մնաց քաղաքումս միայն 7 օր, և այդ կարճ ժամանակամիջոցում նա անսովոր չարժողութիւն գցեց մեր թմրած ժողովրդի մէջ: Օգոստոսի 6-ին, եկեղեցում, Խորէն եպիսկոպոսը, մեծ բազմութեան առաջ ոգեորված քարոզ խօսեց հասարակական խնդիրների մասին և անգին տպաւորութիւն գործեց ժողովրդի վրա:

Բայց Խորէն եպիսկոպոսի գործունեայ բնաւորութիւնը, հարկաւ, այս քարոզով չը պէտք է բաւականանար, և ահա օգոստոսի 9-ին մի ժողով հրաւիրեց: Այդ ժողովի մէջ նախ՝ նա յայտնեց, որ տիկին Թիրուհի Պողոսեանց արդէն ապահովել է Ստավրօպօլի երկսեռ դպրոցների գոյութիւնը. երկրորդ՝ մի առ մի ցոյց տուեց նոր շինվող դպրոցական շէնքի՝ թէ տեղի և թէ սենեակների դասաւորութեան անյարմարութիւնները և յանձնեց ժողովրդին հրաւիրելու՝ Դեաչկեանի, որի հաշվով կառուցվում է այդ շէնքը, լուրջ ուշադրութիւնն այդ անյարմարութիւնների վրա, հէնց որ յիշեալ սարոնը կը վերադառնայ Մոսկվայից. երրորդ՝ հիմնեց աղքատաց հոգաբարձութիւն, և հէնց այդ ժողովում կատարեց հոգաբարձութեան չորս անդամների ընտրութիւնը, և, վերջապէս, չորրորդ՝ մի յանձնաժողով կազմեց դպրոցական նոր շինութեան վրա հսկելու:

Փակելով ժողովը գիշերվայ ժամի 11-ին, Խորէն եպիսկոպոսը յորդորեց ժողովրդին շատ շատ հաւաքվել և խօսել իրանց հասարակական գործերի մասին, աւելացնելով, որ «concordia res parvae crescunt, discordia res magnae labuntur»:

Այստեղից եպիսկոպոսը ճանապարհ ընկաւ Արմաւիր:

Յ. Բէկդիլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի սկզբին, կէսին, նոյն իսկ օգոստոսի 20-ին և 25-ին ուսուցիչներին և վարժուհիներին զրկել պաշտօնից և թողնել առանց տեղի,—դա մի սովորական բան է դարձել մեր թեմական տեսուչների համար: Միթէ մեր թեմական տեսուչները, որոնք հազար ռուբլիներով ռոճիկ են ստանում, այն կարծիքի են, որ տարեկան 200 կամ 400 ռուբլի ստացող, ընտանիք ունեցող ուսուցիչները կարող են նոյն իսկ օդով ապրել: Այլապէս ինչպէս կարելի է մի խեղճ ուսուցչին կամ ուսուցչուհուն ուսումնարանական տարվայ սկզբին պաշտօնից արձակել:

—

Մի քանի օր առաջ հասաւ Թիֆլիս մի պօլսեցի նկարիչ, պ. Նշանեան: Նա բերել է իր հետ իր նկարների մի մասը: Պ. Նշանեանը Նապոլիի Դոմենիկո Մորելլիի աշակերտ է, երկար տարիներ Եգիպտոսում է գործել և ապա իր գեղարուեստական գործունէութիւնը տեղափոխել է Պոլիս: Նա պօրտրետիստ և մանաւանդ ժանրիստ է: Պ. Նշանեանը, ինչպէս տեղեկացանք, արդէն յայտնի է ոչ միայն Եւրոպայում, այլ և Ամերիկայում, ուր գտնվում են նրա մի քանի պատկերները: Պ. Նշանեանի անունը Թիֆլիսի հասարակութեանը ևս անծանօթ չէ. 1890 թ-ին Հայկակը ծանօթացրել էր մեր ընթերցողներին (տես «Մշակ» № 72) նկարչի հետ, նկարագրելով մանաւանդ «Մուշի մէջ հայ հարսնիքը» Ամերիկայի համար գնված մեծ պատկերը՝ իր գրչին յատուկ փայլուն և աղուս գծերով: Մենք առիթ կունենանք խօսել պ. Նշանեանի պատկերների մասին, իսկ այսօր կը հրաւիրենք արուեստասէրներին, անցնելով Էնֆիաճեանցի խանութի առաջ՝ չը զլանալ ուշք դարձնել այնտեղ հանդէս դրված մի փոքրիկ «ժանրի» վրա, որի նիւթը վերցրած է արդի եգիպտական կեանքից: Պատկերը ներկայացնում է արևելեան ստիլով շինած մի դրան առաջ նստած երկու կանայք՝ մէկ ֆէլլահ և մէկ նէգր կին, որը իր ծնկների վրա բռնած ունի քնած երեխայ: Գոյները ճոխ, դիրքը կենդանի, լուսաւորութիւնը արևելեան: Նկարիչը ոչ միայն ընդունակ դիտող է, այլ և տաղանդ ունի ամենքին մատչելի կերպով հաղորդել տեսածը:

—

Արտասահմանեան լրագիրները հաղորդում են, որ խօլերան մեծ կոտորածներ է անում Ադանայի, Դիարբէքիրի և Ալէպպօի վիլայէթներում: Հաւատարիմ իր աւանդական սովորութեանը, Թիւրքիան, ի հարկէ, ոչինչ սանիտարական միջոցներ ձեռք չէ առնում, և խօլերան, նրա շնորհով, կարող է տարածվել ամեն տեղ:

—

Լսում ենք, որ Նահապետ վարդապետ Նահապետեան, (նախկին Արշակ Նահապետեան), որ վերջին ամիսները կատարում էր կաթողիկոսական դիւանապետի պաշտօնը, նորից ուղարկվում է Կարս՝ յաջորդի պաշտօնով: Մեզ զարմացնում է, թէ ինչպէս Էջմիածինը վստահանում է բաժանվել մի այնպիսի վարդապետից, ինչպիսին է Նահապետեանն:

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մի երկու օր առաջ, քաղաքի մօտ գտան Յովհաննէս Իգիթով անունով մի մչեցու դիակը, որին մորթել էին ու ականջները կտրել տարել: Կարծում են որ դա Թիւրքերի արածն է, որովհետև միայն Թիւրքերը ընդունակ են այդ տեսակ բարբարոսութեան»:

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 5-ին, դերասան Վրոյրը, մասնակցութեամբ տեղական սիրողների, տուեց մի ներկայացում: Խաղացին «Բաղդասար Աղբար»: Վրոյրը՝ Բաղդասարի դերում, բաւականին աջող էր. վատ չէին պ. Ատովմեանը փաստաբանի դերում, օր. օր. Շ. Ահարոնեանը և Օլ. Մակեդոնեանը: Յ. Ահարոնեանը սիրահարի դերում, և Ազրելեանը թոյլ էին: Ամսիս 8-ին Զաքաթալից եկաւ այստեղ Կարա-Մուրզան և մտադիր է օգոստոսի 20-ին տալ մի կօնցերտ: Արդէն կազմում է քառաձայն խումբ մօտ 50 հոգուց բաղկացած: Ժողովուրդը անհամբեր սպասում է կօնցերտին»:

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. «Զանգեզուր գաւառի Վանք գիւղումն ապրում է մէկ հայ ծերունի, Դաւիթ Ղազարեան անունով: Նա այժմ 110 տարեկան է, իսկ նրա ամուսինը՝ 90 տարեկան: Դաւիթի որդիների, թոռների և ծոռների թիւը հասնում է 91-ի, որոնցից 71-ը այժմ կենդանի են: Սրանից երեք տարի առաջ ծերունի Դաւիթը առողջ էր և աշխատանքի ընդունակ: Այժմ նա կորցրել է յիշողութիւնը և լաւ չէ տեսնում, իսկ լսելիքը, ատամները և հոտառելիքը անվնաս են մնացել»:

—

ՂԱՄԱՐԼՈՒ գիւղից մեզ գրում են. «Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մեր ժողովուրդը առաջ կասկածանքով էր նայում բժշկի և բժշկութեան վրա, պէտք է խոստովանել, որ մեր այժմեան բժիշկ Յովհաննիսեանը շատ լաւ հետևանքների է հասել՝ ժողովրդի հաւատը գրաւելու մէջ: Գիւղացիք ոգեորված գովում են նրա սիրալիր վարմունքը և յարաբերութիւնը ժողովրդի հետ: Յովհաննիսեանի եռանդուն հոգատարութիւնը Ղամարլուի առողջապահական պայմանների մասին՝ ունեցել է արդէն իր բարերար ազդեցութիւնը: Այդ պատճառով ցաւալի է, որ բժշկին պաշտօնով փոխադրում են Երևան, որով մեր ժողովուրդը պիտի զրկվի իր բարի և հոգատար բժշկից»:

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Երէկ, օգոստոսի 13-ին, թատերասէրները, մասնակցութեամբ պ. Սողոմոնեանի և Տ. Պետրոսեանի, ներկայացրին «Կախարդված պրինց» կօմեդիան և «Երկու հարիւր հազար» վոդեվիլը: Դերակատարները սովորել էին իրանց դերերը մեծ բարեխղճութեամբ, և արժանացան բուռն ծափահարութեան հանդիսականների կողմից: Ներկայացման ընթացքում, սիրողներից մէկը խօսեց այն մասին, թէ ինչ է թատրոնը, բացատրեց կարճ կերպով թատրոնի նշանակութիւնը և ի միջի այլոց բերեց օրինակներ Շեկսպիրի «Համլետից» և «Օտէլօից»: Բացատրութիւնը հանդիսականների համար մատչելի լեզուով էր և շատ աջող: Դահլիճը լի էր հանդիսականներով. նոյն իսկ շատերին, տեղի սակաւութեան պատճառով, ստիպված մերժում էին: Ի դէպ. մի քանի խօսք մեր կանանց և օրիորդների հագուստների մասին: Ապա, ապա, ինչ մեծ դեր է խաղում սրանց հագուստի մէջ. ինչքան ոսկի մատների, ճակատների վրա, տէր Աստուած... կարծես սրանց ամբողջ ուղեղը զբաղված է նրանով, որ ինչքան կարելի է թանգագին հագուստներ ունենան: Տիկիններ, օրիորդներ: Ո՞ւմ էք կամենում զարմացնել ձեր ապատներով ու ոսկէ զարդարանքներով: Միթէ չը գիտէք, որ այժմ պճնասիրութիւնը միայն ծիծաղ է յարուցանում»...

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ մեզ գրում են օգոստոսի 19-ին. «Նոր-Նախիջևանի և չրջակայ գիւղերի հայոց դպրոցները դեռ փակ են և թեմական տեսչի օգնականը, Մխիթար վարդապետը, բացակայ է. այն ինչ ռուսաց բոլոր դպրոցներում ուսումը արդէն ամսիս 17-ին է սկսվել»:

—

ՊԵԱՏԻԳՕՐՍԿԻՑ մեզ գրում են. «Երէկ, ամսիս 14-ին, երգիչ Շահլամեանը տուեց մի կօնցերտ մեր թատրոնում: Ժողովուրդը սիրով ընդունեց երգչին և բուռն ծափահարութիւններով կրկնել տուեց մի քանի երգեր: Յարգողների կողմից մատուցվեց թարմ ծաղիկներից մի գեղեցիկ պսակ: Օգոստոսի 12-ին Շահլամեան մի կօնցերտ էլ տուեց Կիսլովոդսկում, անգին բազմութեան ներկայութեամբ:

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Այս օրերս լուր ստացվեց, որ քիւրդ բէգի աղջիկ փախցնող հերիչատցի հայ երիտասարդը, (որի մասին հաղորդված է արդէն «Մշակի» մէջ) երկար այս ու այն կողմը թափառելուց յետոյ, իրան հալածող համիդիէյի գնդի ձեռքից փախել է Շատախ և ապաստանվել մի քիւրդ շեյխի տանը՝ աղջկայ հետ միասին: Քիւրդերը վրա են հասել և շեյխից պահանջել փախստականներին. շեյխն սկզբում մերժել է յանձնել նրանց, բայց երբ նրանք երդվել են, որ չեն վնասի, այլ միայն կը բաժանեն իրարից, շեյխը յանձնել է փախստականներին քիւրդերի ձեռքը: Վերջինները երկու թշուառներին բերում են հասցնում Հերիչատի մօտերը, աղջկան գնտակահար են անում, իսկ երիտասարդին մատներից սկսելով կտոր-կտոր են անում»:

—

ՇՈՒԼԱՒԷՐԻՑ մեզ գրում են. «Ամաւվայ արձակուրդներին այստեղ գալով մի քանի տեղացի պատանիներ, որոնք ուսանում են Թիֆլիսում, և ցանկանալով իրանց հայրենի գիւղում ունենալ ժողովրդական ընթերցարան-գրադարան, այդ նպատակով հաւաքել են 400 գիրք: Գէթ այս անգամ աջողվէր այդ կարևոր հիմնարկութեան գործը, որի պահանջը զգալի է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

Տրապիզօն, 12/24 օգոստոսի

—

Կամախի կոտորածը

Ամենահաստատ աղբիւրէ կիմանանք, թէ Երզնկայի շրջակայ նշանաւոր վանքերը և շատ մը հայաբնակ գիւղեր՝ միւշիր Զէքիի հրամանով, թիւրքաց կանոնաւոր զօրքի, բաշիպոզուկներու և քիւրդերու ձեռքով աւերվել են ծանր կերպով:

Սոսկալի խժդժութիւնք տեղի ունեցեր են էրիկ մարդոց, կիներու և աղջոց վրա:

Երզնկայ քաղաքն ալ 10 օրէ ի վեր պաշարման վիճակի մէջ է. դուրս ելնել չը կայ: Հայերէ ձերբակալուեր են 10—15 անձինք, առանց պատճառի: Պարսափը շատ սաստիկ է. սոսկալի կոտորած մը հաւանական է: Պատճառը,—դայմադամի մը, քաղքէն դուրս, աւազակների ձեռքով կողոպտուելն է եղեր:

Լուր կայ, որ Շապէն-Գարահիսարի կից Թամզարայ քաղաքի թուրքեր յարձակուեր են հայերու վրա՝ ջարդելու համար. հայոցմէ մեռածներ և բազմաթիւ վիրաւորեալներ կան. Թամզարայի հայեր տուն, խանութ, եկեղեցի գոցեր՝ քաղաքէն հեռացեր են ամենն ալ. գերեզմանատան մէջ վրաներ զարկած՝ սոսկալովի՝ օգնութիւն կը պահանջեն:

Շաքիր-փաշա ընդհանուր քօմիսէրի պաշտօնով մասնաւոր չոգենաւով Տրապիզօն կը սպասուի մի քանի օրէն. Իմնեայ, Սամսօն, Օրդու, Կերասօն պիտի այցելէ, կըսեն:

Հայերուս հիասթափութիւնը ու յուսահատութիւնը չափազանց է: Ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակ, երբ Շաքիրի նման մարդու մը կուզեն կապել մեր բաղդը:

Տեղացի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Խոյ, յուլիսի 23-ին

Խոյի թիւրքաց հիւպատոսը ձերբակալեց 5 հայեր և ուղարկեց Թիւրքիա, իսկ մէկ ուրիշ հայի՝ հախուռեկցի Կիրակոսին, մեղադրելով իբրև յեղափոխական, երկու չաբաթից աւելի է, որ բանտարկված է պահում:

Լուրերին նայած, քրդերը կամաց կամաց հեռանում են օսմանեան երկրից: Պատճառը զինաթափութեան խնդիրն է: Արդէն շատ ցեղապետներ և շեյխեր ցոյցեր են արել թիւրքաց կառավարութեան դէմ: Մի շեյխ բանտարկված է:

Բողաղ-Բեասանում կրկին խուզարկութիւններ են եղել. տեղացիները չը կարողացան համբերել, բացարձակ կռուի են դուրս եկել: Սպանված է 3 քիւրդ և մի հայ, մի քանիսն էլ վիրաւորված են:

Լուր է պտտում, որ պարսից կառավարութիւնը, թիւրքաց դեսպանի ճնշման շնորհիւ, մտադիր է խուզարկել Սալմաստի մի քանի գիւղերը:

Պարս.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 18 օգոստոսի։ Յուլիսեան-դիսի չինութեան աշխատանքները արագութեամբ առաջ են գնում։ Օրական 3200 մարդիկ են բանում։

ՍՕՖԻԱ, 18 օգոստոսի։ Յանկով դիմեց մի նամակով բոլգարական կուսակցութիւնների բոլոր ղեկավարներին՝ առաջարկելով վերջ դնել երկպառակութիւններին և ընդունել ընդհանուր ազգային պրոգրամ։ Բոլոր կուսակցութիւնները պէտք է յայտնեն, որ կը միանան միայն ազգային ժողովի այնպիսի մեծամասնութեանը, որը կը ձգտի վերացնել ճգնաժամը օրինական և անկողմնապահ միջոցներով։ Այդ միջոցները Յանկով համարում է սահմանադրութեան 38-դ յոդուածի վերականգնումը, ռուսաց ծառայութեան մէջ գտնվող բոլգարական բոլոր օֆիցէրներին նեռու

չնորհելը՝ վերադարձնելով նրանց բոլգարական բոլոր իրաւունքները։ Յանկովի նամակը այնքան պրինց Ֆէրդինանդի դէմ չէ ուղղված, որքան այժմեան կառավարութեան դէմ։

ՊԱՐԻԶ, 19 օգոստոսի։ Պէկինի ֆրանսիական դեսպանը տեղեկացրեց արտաքին գործերի մինիստրին, որ միսիոներների կոտորածի առիթով եղած առաջադրութեան պատճառով, չինական կառավարութիւնը պարտաւորվում է պատժել յանցաւորներին և վճարել վնասվածներին 4 միլիոն վարձատրութիւն։

ԲՐԻՍԼԷԼ, 19 օգոստոսի։ Սենատն ընդունեց դպրոցական նոր օրէնքը 56 ձայնով 31-ի դէմ։

Կ. ՊՕԼԻՍ, 19 օգոստոսի։ Լուր է պատում, որ բոլգարական էկզարխ Եսոիֆը կամենում է հրաժարական տալ, որովհետև Թիւրքաց կառավարութիւնը թշնամաբար է վերաբերվում էկզարխի պահանջներին։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 19 օգոստոսի։ Համառուսական վաճառականութեան լիազօրների ժողովը, 44 ձայների մեծամասնութեամբ 11-ի դէմ, գաղտնի քուէարկութեամբ, որոշեց Նիժնի-Վեսելա երկաթուղի անցկացնել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 օգոստոսի։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել Բարձրագոյն պալատում սուգ պահել ութ օրով՝ Օլդենբուրգեան Թագաժառանգ պրինցուհու մահվան առիթով։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 18-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	95 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	37½ »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	75 »
Ոսկի — — արժէ . .	7 »	40
Մաքսային կուպոններ — .	148 »	— »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկոնտ — . .	5 —	7%
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
4% պետական բէնտա	99⅜	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .	164 »	— »
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	—
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	279 »	— »
— — երկրորդ —	241 »	— »
5% պետական երկաթուղ. բէնտա.	101⅜	— »
4% նեղքին փոխառութեան . . .	99 »	— »
4½% շրաս. թղթ. ազն. կալ. բանկի	100 »	50 »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաս. թղթ. — — .	215 »	—
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	100 »	75
4½% գրաւական թղթեր կալուած.	— »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	151 »	50 »
— — — թղթադ. .	— »	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	101 »	75
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	50
Օդեսայի — —	100 »	25
Թիֆլիսի — —	99⅝	—
Գրաս. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 5%	99 »	50 »
— — Թիֆլիսի 6% . .	101 »	50
— — — 6% . .	101 »	50 »
— — — 5% . .	99 »	50 »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՅՏՆՈՒՄ Է

—

ԲԱԴՈՒ Ա. Թումայեանց։ Անքաղաքավարի լինել դժուար չէ, բայց ապացոյց է վառ դատարակութեան... Իսկ ինչ վերաբերում է հասցէ փոխելուն, մինչև չուղարկէք 28 կոպէկի մարկա, «Մշակի» համարները նոր հասցէով չեն ուղարկվի։

ՊԱՍՕՐԱՑ. (Հնդկաստան)։ Դր. Ա. Մուրադեանց։ Բարեհաճեցէք դիմել ուղղակի Լազարեան Ճեմարանի վարչութեանը, Մոսկվա։

ԵՒԼԱԽ. Կ. Նարինեան։ Դուք յայտնում էք ձեր նոր հասցէն, առանց յայտնելու հինը։ Բացի դրանից հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել ոչ թէ 3, այլ 4 հատ 7 կոպէկանոց մարկա։

Խմբագիր և հրատարակիչ՝
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուչարթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին ներախայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մեղի և սեռական օրգանների հ. ներքին և մաքթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մեղի, խիխ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ երկար տարիներ պաշտօն է վարել Հայոց ղէպքոյներում, ցանկանում է տեղ ունենալ դաւառներում։ Կարող է աւանդել միգասեան ուսումնարանի բոլոր առարկաները, բացի ռուսաց լեզուից։ Հասցէն՝ Тифлисъ Циціановская улица, домъ Парсаданова, Парсаданову. (№ 95) 1—5

Վաճառվում է

ԲԷԼ ՄԵՌՆԵՍԵԱՆԻ

ՄԻՐՋԱ ԻՍԿԵԱՆԴԱՐ

անունով գլուխը,

ՏՊԱԳՐՎԱԾ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Գինը 50 կոպէկ։

Պէտք է դիմել՝ ԹԻՖԼԻՍ, կենտրոնական գրավաճառանոցին։ (№ 95 1—8

Վաճառվում են

ԼԵՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

„ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ“

Գինը 60 կոպ.

„ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ“

Գինը 20 կոպ.

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

„ԱԳՈՒԼԵՑՈՑ ԲԱՐԲԱՌԸ“

Գինը 2 ռուբլի։

Կարելի է ստանալ Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում։ (№ 94) 1—10

Լոյս տեսաւ

ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Դասատուութեան պատրաստվողների համար. թարգմանութիւն Յ. Սառիկեանի։

Գինն է 30 կոպ.

Ծախվում է կենտրոնական գրավաճառանոցում։ (№ 89) 2—4

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ օրիորդաց դպրոցի համար հարկաւոր է ռուսաց լեզուի մի ՎԱՐԺՈՒՀԻ։

Յանկացողները պայմանների մասին թող դիմեն „Էժանագին գրադարան“, Ա. Դաւութեանին։ (№ 93) 2—4

ԹԻՖԼԻՍՈՒՄ, „ՎԷՐՍԱՅԼ“ ՀԻՒՐԱՆՈՑՈՒՄ

եղած միջոցին,

ինձանից գողացել են ԽԱՂԱՏՈՄՍԵՐ. առաջին խաղարկութեան 07701/26, երկրորդ—11482/8։ Գտնողը կամ տեղը ցոյց տուողը կը ստանայ 100 ռուբլի վարձատրութիւն։

Հասցէս. Эривань, Александру Акопянцъ.

(№ 86) 3—3

ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ԵՐԿՈՒ ՎԱՐԺՈՒՀԻ, երեքը ցենզաւոր, իսկ մէկը առանց ցենզի, ցանկանում են ծառայել գաւառում միասին կամ առանձին։ Դիմել՝ Тифлисъ, Сололаки, Орловская улица, № 28 г. Бабіяну.

(№ 95) 1—3

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտնում է, որ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ օրիորդաց ծխական ուսումնարանի աշակերտուհիների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 28-ից։ (№ 95) 1—3

ԿԷՕԼԷՐԵԱՆ ՓՈՇԻ ՄԻՋԱՏՆԵՐԻ ԴԷՄ

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ։

Մօտ 15 տարի առաջ այդպէս անուանված „Պարսկականը“, իսկապէս „կովկասեան“ երիցուկը (աղացված Կովկասեան լեռների վրա վայրենի կերպով բուսնող երիցուկի երկու ծաղիկներից) համարվում էր և յիրաւի էր ամենանշանաւոր և իսկական միջոց ամեն տեսակ միջատների դէմ։

Այդ պատճառով այդ փոշին արտահանելը բոլոր երկիրները բաւական նշանաւոր արդիւնք էր, մինչև որ տեղացիները իրանց համարձակ խառնուրդներով և ֆալսիֆիկացիով չը փչացրին այն ատիճան, որ նա բոլորովին կորցրեց իր նախկին նշանակութիւնը և մինչև անգամ մենք, ռուսներս, ուրախ էինք, որ հնար ունեցանք փոխարինել նրան այն ժամանակ անակնկալ կերպով ծախու երևացած „դալմատական երիցուկով, թէպէտ վերջինը իր ազդեցութեան զօրութեամբ միջատների վրա՝ տեղի է տալիս առնուազն „կովկասեան երիցուկին“։

Այդպիսով, փոխանակ պետութեան համար շահաւէտ արտահանման արդիւնքի, Դալմատեան երիցուկը ներմուծութեան նշանաւոր առարկայ դարձաւ արտասահմանից, իսկ Կովկասեան երիցուկը համարեա թէ մոռացան։

Կամենալով վերականգնել կորած վստահութիւնը դէպի մեր գերազանց հայրենի արդիւնքը, մենք 1892 թ-ին հիմնեցինք Կովկասում, Ալէքսանդրոպոլ քաղաքում, մշտական գործակալութիւն, թէ հսկելու համար Անդրկովկասում գենագերչակի մշակութիւնը զարգացնելու մեր գործի վրա, և թէ յատկապէս տեղական գիւղացիների ձեռքով երիցուկի ծաղիկների ամենալաւ տեսակները ընտրելու համար, որ հաւաքվում է հենց ծաղկելու սկզբին, և մանաւանդ

ԱՐԱԳԱԾ

լեռան ստորոտի մօտ։ Զօրացած ծաղիկները ազատվում են մեր սեփական գործարանում, Մոսկվայում, և այդ բոլորից պարզ երևում է, որ ամենից լաւ կը լինէր պահանջել Ր. Կէօլէր և Ընկերութեան նշանը և դրոշմը, որպէս երաշխաւորութիւն ապրանքի վերոյիշեալ արժանաւորութիւնների։

Գործարանա-Առևտրական ընկերութիւն „Ր. Կէօլէր և Ընկ., Մոսկվայում“

(№ 74) 2—2

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ից ԿՐԿԻՆ ԿԸ ՍԿՍՎԻ ՈՒՍՈՒՄ

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԵՒ ՁԵՌԱԳՈՐԾԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

որը գտնվում է իշխ. Արղութեանի տան վերին յարկում, անկիւն Միջի փողոցի և Երևանեան հրապարակի։

Նոյն տեղը, շաբաթը մի անգամ տալիս են ՊԱՐԻ ԴԱՍԵՐ։ Յանկացողները կարող են այժմեանից պայմանաւորվել։ (№ 86) 3—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հարիւրի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(և. շ.) № 62 10—25

ՁԷԹ ԵՒ ՓՈՇԻ

պղնձէ առարկաներ մաքրելու համար

Ր. ԿԷՕԼԷՐ ԵՒ ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ։

Այդ գործարանի ձէթով և փոշիով մաքրված պղնձէ առարկաները այնպիսի ողորկում և փայլ են ստանում, որ չեն ունեցել մինչև անգամ նոր եղած ժամանակ։ Սակայն պնելու ժամանակ հարկաւոր է զգուշանալ ուրիշ ծագում ունեցող այդպիսի արդիւնքներից, որովհետև վատ յատկութեան ձէթի գործածելը, կամ, որ գլխաւորն է, խոնաւ օդի մէջ ինքն իրան լուծվող վիէննայի կիրը (այսինքն փոշի չը դարձած) շատ հրապուրիչ է իր շահաւէտութեամբ և շատ յաճախ գործ է ածվում, այն ինչ յայտնի է, որ այդ կերպ փոխված կիրը բոլորովին կորցրել է իր ոյժը։ (№ 78) 2—2

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Августа 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.